

**ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի շնորհավորական ուղերձը  
Ապրիլի 7-ի առթիվ**

Սիրելի՛ հայուհիներ,

Սրտանց շնորհավորում եմ ձեզ ապրիլյոթյան այս գեղեցիկ օրվա՝ Մայրության  
և գեղեցկության տոնի կապակցությամբ:

Միամսյակը առիթ էր՝ ձեզ ևս մեկ անգամ մեր երախտագիտությունն ու հարգանքը  
հայտնելու համար: Ցանկանում եմ, որ անկախ մեր կյանքի խոչընդոտներից, դուք  
լինեք մեր կողքին՝ զորավիգ, սատար ու մասնակից լինելով մեր բոլոր  
նախաձեռնություններին: Այսօր ոչինչ այնքան անլուծելի չէ, որքան հավատի ու  
վստահության վերկանգնումը վաղվա օրվա հանդեպ և այս գործի հիմնական բեռը  
ձեր ուսերին է: Դուք մեր կյանքի լուսավոր այն կետն եք, որը մեզ առաջնորդում է  
դեպի անհաղթահարելի թվացող բարձունքներ:

Սիրելի՛ կանայք՝ մայրեր, քույրեր ու աղջիկներ, մաղթում եմ ձեզ անսպառ սեր,  
հաջողակ լինելու նախախնամություն, անձնական երջանկություն և առողջություն:

ՀՀ Սյունիքի մարզպետ



Վ. Հակոբյան

6 ապրիլի 2014թ.